ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

15 մայիսի 2024 թվական, N 63-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՃՈՃԿԱՆ ԳՅՈՒՂԻ 6-ՐԴ ՓՈՂՈՑ, 29 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 06-069-0070-0036 ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.02435 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 89-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի 29/04/2024թ. N 01/111.6/03740-2024 գրությունը, սեփականության իրավունքի N 10022020-06-0032 վկայականը՝

համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համայնք Ալավերդի, գյուղ Ճոճկան, 6-րդ փողոց, 29 հասցեում գտնվող, պետական սեփականության ուսուցչի տան շենքի պահպանման և սպասարկման համար զբաղեցրած 06-069-0070-0036 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության համայնքային սեփականության 0.02435 հեկտար մակերեսով Հայաստանի Հանրապետությանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված հողամասը նվիրել Հայաստանի Հանրապետությանը:
2. Առաջարկել Ալավերդի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով կնքելու հողամասի նվիրատվության մասին պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշումն ընդունվեց.

			ԿՈՂՄ	ԴԵՄ	ՁԵՌՆՊԱՀ
1.	ԴԱՎԻԹ	ՂՈՒՄԱՇՅԱՆ			
2.	ԼՈՐԱ	ՍԱՐԳՍՅԱՆ			

3.	ՀԱՄԼԵՏ	ՂՈՒԼՅԱՆ			
4.	ԱՐՄԻՆԵ	ԵՐԻՑՅԱՆ			
5.	ՄԿՐՏԻՉ	ՄԱՐԳԱՐՅԱՆ			
6.	ՀԱՐՈՒԹՅՈՒՆ	ՁԱՎԱՐՅԱՆ			
7.	ՖԼՈՐԱ	ԹԱԹՈՒԽԱՇՎԻԼԻ			
8.	ԴԱՎԻԹ	ՍԱՐԳՍՅԱՆ			
9.	ՀՐԱՆՏ	ՀԱԽՎԵՐԴՅԱՆ			
10.	ԱՆԱՀԻՏ	ՍՄԲԱՏՅԱՆ			
11.	ԱՐՏԱԿ	ԳԵՎՈՐԳՅԱՆ			
12.	ԱՐԵՆ	ԴԱԼԼԱՔՅԱՆ			
13.	ՀԱՅԿ	ՀՈՎԱԿԻՄՅԱՆ			
14.	ՍԻՄՈՆ	ՁԱԽԱՐՈՎ			
15.	ՆԱՐԻՆԵ	ԹՈՐՈՍՅԱՆ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

2024թ., մայիսի 15,
Լոռու մարզ, ք. Ալավերդի

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻՑ ՀԱՏՎԱԾ
Մ 1:1000



ՀՀ-ին նվիրվող հողամասի տեղադիրքը /ծածկագիր՝ 06-069-0070-0036 /

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

«_____» _____2024 թ.

Ալավերդի համայնքի ղեկավար Դ. Ղումաշյանին

Հարգելի՛ պարոն Ղումաշյան

Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման թիվ 10022020-06-0032 վկայականով ՀՀ Լոռու մարզի «Մարզ Լոռի, համայնք Ախթալա գյուղ Ճոճկան 6-րդ փողոց 39» հասցեում գտվող ուսուցչի տունը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը, իսկ դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 06-069-0070-0036 կադաստրային ծածկագրով 0.02435 հա մակերեսով հողամասը հանդիսանում է համայնքային սեփականություն՝ տրված Հայաստանի Հանրապետությանը անհատույց օգտագործման իրավունքով:

Խնդրում եմ ավագանու առաջիկա նիստում քննարկել ուսուցչի տան պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ 06-069-0070-0036 կադաստրային ծածկագրով 0.02435 հա մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու հարցը:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

X _____

Հարգանքով՝

Ա. ՂԱՋԱՐՅԱՆ

կատ. Ս. Մարկոսյան
հեռ. (0322) 2-34-99

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 10 փետրվարի 2020 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

Հայաստանի Հանրապետություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ախթալա գյուղ Ճոճկան 6-րդ փողոց 39 ուսուցչի տուն

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 969212 վկայական

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 06-069-0070-0036
Մակերեսի չափը (հա)՝ 0.02435
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Բնակելի կառուցապատման
Գրանցված իրավունքի տեսակը՝ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

ՎԿԱՅԱԿԱՆ N 10022020-06-0032, գաղտնաբառ՝ DWHAAKCWCTHC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ բնակելի

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-069-0070-0036-001	Ուսուցչի տուն	194.98 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Կատարվել է շինության մակերեսի ուղղում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման իրական ամսաթիվն է 21.01.2002թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սուրեն Սարգսյան

Ձրաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 10022020-06-0032, գաղտնաբառ՝ DWHAAKCWCTHC

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am նայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե